մական գործունէութեան 30-ամեակը։

Ծիրդ 1880 թ. օգոստոսի 30-ին առաջին անգամ իշխան Սումբատովը բեմ դուրս եկաւ Մոսկվայի Փոքր Թատրոնում, որի կառավարիչն է այժմ։

«Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնները հետեւեալ շնորհաւորական հեռագիրն ուղղեցին տաղանդաւոր արտիստին և դրամատուրգին, Մոսկվա.

«Մշակ» լրագրի և «Արօր» ամսագրի խմբագրութիւնները սրտագին շնորհաւորում են փառաւոր արտիստական գործունէութեան Կոմսի լաւագոյն զուակիր, որ այնքան շատ նպաստեց համերաշխութեան՝ հայրենիքի ազգութիւնների միջեւ։

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Արդէն քանի ամիսներ են, որ «Մշակը» և ընդհանրապէս հայկական թերթերը առատ յօդուածներ և վիճաբանութիւններ են պարունակում հայկական տպագրութեան 400-ամեակը տօնելու առիթով։

Թէ ինչ նշանակութիւն ունի այս մեծ տօնը, հասկանում է այն հայը, ով զբաղված է եղել և զբաղվում է հայկական հին և նոր գրականութեամբ, հայի ազգային պատմութեամբ, նրա կեանքը ու կենցաղով, և վերջապէս նա, ով գիտէ, թէ ինչ է էնք 400 տարի առաջ և ինչ ենք այսօր։

Այո, հիրդ է, մեծ չէ մեր արած առաջադիմութիւնը, եթէ այն համեմատուու լինենք օտար ազգերի արած հայկական առաջադիմութեան հետ։ Մենք փոքրիկ ենք եղել և քաղաքական անձուկ դրութեան և աննպաստ պայմանների մէջ, ուստի չէր կարելի մեծ առաջադիմութիւն սպասել մեզանից։ Բայց եթէ առանձին վերցնենք այս 400 տարվայ ժամանակամիջոցը, կարող ենք ասել, որ ահագին առաջադիմութիւն ենք արել, և զրանից աւելին սպասել չէր կարելի։

Վերցնենք լեզուի հարցը։ Ովքեր էին մեր զրողները։ Հէ որ գլխաւորապէս հոգևորականները, այն էլ ժողովրդին անհասկանալի լեզուով, գրաբարով։ Իսկ ինչ վերաբերում է նիւթերին, յայտնի է որ հոգևորականները, որպէսզի հաւատարիմ մնային իրանց կոչմանը, չէին կարող բացի եկեղեցու վերաբերեալ հարցերից՝ աշխարհային որևէ հարցի մասին գրել, իսկ եթէ կարող էլ էին, չէին անի՝ աչքի առաջ ունենալով ժողովրդի բամբասանքները և զրպարտութիւնները։ Ի՞նչ անէր հոգևորականը՝ գրականութեան տէրը։

Տասներեքերորդ դարի հայը չը կարողացաւ բաւականանալ իր նախնիքների նման՝ գրական անհասկանալի լեզուով. նա ինքնագիտակցութեան եկաւ, հասկացաւ կրթութեան մեծ կարիքը, ինչպէս և այն, որ այդ՝ ստացեալ գրաբար լեզուով անհնարին էր. նրան հասկանալի էր միայն իր խօսած լեզուն, ուրիշ ոչինչ։ Գրաբարը միմոյնն էր նրա համար, ինչ յունարէնն ու ասորերէնը հին գերորդ դարի հայի համար։ Եւ ահա նա ծնեց իր միջից այն մեծ մարդուն, որը կրթվելով և շփվելով եւրոպացիների հետ՝ հասկացաւ պարզ լեզուի նշանակութիւնը և գրեց իր աշխարհաբար կամ ժողովրդական բարբառով «Վէրք Հայաստանի»ն, որը մի չը տեսնված բան էր հայ գրականութեան մէջ։ Բայց պակաս չէին հայ ժողովրդի մեծամասնութեան արտունչները և յետադիմական թայլերը։ Նրանք կարծես մի տեսակ մեղք էին համարում աշխարհաբարով գրելը և պղտոցներում դասախօսելը։ այդ հրևում է նոյն հեղինակի հրատարակած աշխարհաբար այբբենարանի վառ ընդունելութիւնից։

Եթէ համեմատենք Արովեանի գրած աշխարհաբարը և մեր արդի հեղինակների գրած լեզուն, այն ժամանակ կը տեսնենք թէ ի՞նչ քայլեր ենք վերցրել այս էկ ս դարվայ ընթացքում, ինչքան է ծաղկել աշխարհաբարը և զժբաղդաբար որչափ այլասերվել։ Իրաւ, մարդ հիանում է լեզուի առաջադիմութեան վրա, երբ համեմատում է «Վէրք Հայաստանի»ն արդի զրուածքների հետ, որոնք սահուն, հկուն և հարուստ են, բայց վերջին տարիները, աւաղ, եւրոպական բազմաթիւ անհասկանալի բառերով խրթնացած։ Սա իսկ և իսկ չարագուշակ թանատիր է, որ ծնունդ է առել մեր աշխարհաբար գրականութեան մէջ։ Ընթերցող, չը կարծէք թէ ես այնքան նախապաշարված եմ, որ չեմ հասկանում եւրոպական բառեր գործածելու նշանակութիւնը և նրա պատակը։ Այդ հասկանում եմ ես և մէկին եմ նրանցից, որոնք յարմար տեսնում և ժամանակին գործ են ածում օտար բառեր։ Բայց արդեօք այդ գեղեցիկ է լինում և այն դէպքում, երբ մենք ունենք միմոյնն նշանակութեամբ բառեր, և էլի եւրոպականն ենք գործ ածում։ Պէտք է ներվի ասելս, որ զուցէ դա շտեղի կողմից արվում է լոկ ցոյց տալու համար, թէ իրանք գիտեն այս ինչ կամ այն ինչ եւրոպական լեզուու։ Ապա թէ ոչ՝ ինչն է ստիպում հայ զրողին կամ յօդուածագրին գործ ածել «միտինգ», «կօմիտէ», «սպիդ», «կլիւբ» և ուրիշ բազմաթիւ եւրոպական բառեր, որոնց համանշները կարծեմ հայկական ճոխ բառարանը կարող կը լինի մատակարարել որոշ չափով։ Ինչքան անհասկանալի է գանում մեր աշխարհաբար մանաւանդ նրանց համար, որոնք ծանօթ չեն ոչ մի եւրոպական լեզուի հետ։ Երևի մեր յարգելի գրողներն ու յօդուածագրերը կարծում են, որ իրանց գրքերը կամ յօդուածները միայն իրանց երկրումն են կարդացվում, չը մտածելով զանազան հայ գաղութների մասին։ Երբ հայ թերթերը համառում են Պարսկաստանի կամ Հնդկաստանի խորքերում ընկած հայի ձեռքը, սա ինչ է նկատում—անծանօթ բառերի կոյտ, բառերը, որոնց արտասանելն երբեմն նոյն իսկ անհնարին է նրա համար։ Մենք, արդի հայերս, խուսափում ենք գրաբարից, համարելով նրան մեռած և անհասկանալի լեզու, բայց միևնոյն ժամանակ մենք կուրօրէն եւրոպական լեզուներից անխտիր փոխ առնելով զարձնում ենք մեր պարզ ժողովրդական լեզուն աւելի խրթին և աւելի անհասկանալի, քան թէ գրաբարը։ Այնպէս որ մի հայի համար թերևս աւելի հեշտ կը լիներ գրաբարը սովորել, քան աշխարհաբարը։ Եւրոպական բառեր գործածելը կարելի է թոյլատրելի համարել միայն այն դէպքում, երբ չունենք եւրոպականին համապատասխանող բառ, նրա նշանակութիւնն էլ պիտի լուսաբանվի փակագծերի մէջ։

Ժամ և յարմար առիթ է լուրջ կերպով վերաբերվելու այս բանին։ Թող տպագրութեան 400-ամեակի տօնը լոկ ձևական հանդէսների և բացագանչութիւնների մէջ չը կայանայ։ Թող հայ գրագէտը, հայ բանասէրը, հայ ուսուցիչը և հեղինակը հասկանան այս վեհ տօնի վեհ նշանակութիւնը, այն տօնի, որ մի դարագլուխ կարող է բանալ հայ գրականութեան համար, և պատկեն նրան այնպիսի պատկերներով, որ անթառամ մնան Ուռալի է նոյնպէս, որ նորից կարծարծվի այն գաղափարը, որ հաստատվի մի այնպիսի մեծ հրմարկութիւն, որ նկի մեր լեզուի և գրականութեան վրա։

Որպէս անկեղծ հայ և հայի զաւակ, իմ սրտին մօտ է այս մեծ տօնի նշանակութիւնը։ Ուստի մաղթում եմ բարի և աջողալից դարագլուխ մեր նոր գրականութեանը։

Նժդեհ

Կալկաթա

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

Օգոստոսեան հանդէսները վերջանալուց յետոյ, սկսվում է մինիստրների արձակուրդների երկրորդ սերիան։ Առաջին հերթին հանգստանալու նպատակով իր կալուածքն է մեկնում՝ Նովգորոդի նահանգը՝ մինիստրների խորհրդի նախագահ Վ. Կոկովցևը։ Առևտրի մինիստր Տիմաշևը մեկնում է արտասահման 2 ամսով։ Իսկ ժողովուս. մինիստր Կասսոն մեկնում է իր կալուածքը Բեսսարաբիա։

Սեպտ. 7-ի երեկոյեան Բալմօրալ է մեկնում Պետերբուրգից՝ սրը Էդուարդ Գրէյի հետ տեսակցելու համար՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովը։ Սեպտեմբերի սկզբին կրկին Ծրանտա է մեկնելու ծովային մինիստր Գրիգորովիչը։

Մնացած մինիստրներից արդէն արձակուրդ առան Սաբլերը, Շչեգլովիտովը, Սուխոմլինովը, Բուլիոլովը։ Ներքին գործերի մինիստր Մակարովը մնում է Պետերբուրգում ընտրողական պայքարը ղեկավարելու համար։

Մինիստրների ցրվելու, նաև Կոկովցևվի բացակայութեան պատճառով մինիստրների խորհրդի մեծ նիստը մինչև սեպտ. 20-ը տեղի չեն ունենայ։ Մինչ այդ ժամանակ կը լինեն այսպէս կոչված «փոքր» նիստեր Ստարիտովոյի նախագահութեամբ։ Սեպտ. 28-ի մօտերը կը կայանայ մինիստրների խորհրդի յատուկ մեծ նիստ Կովկասի Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի մասնակցութեամբ, նուիրված կովկասեան գործերին, գլխաւորապէս Թիֆլիսում բարձր կրթական հաստատութիւն բանալու հարցին։ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը կը գայ մինչ այդ ժամանակ Պետերբուրգ՝ Ներքայ գանվելու իր ազգականութիւններից մէկի հարսանիքին։ («Բ. Ճ.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նոր-Բայազէտ, 28 օգոստոսի

Օգոստոսի 8-ից արդէն Պետական Դուման ընտրութեան մասնակցողների առնուազնական ցուցակը քաղաքային վարչութիւնը պատրաստել և յանձնել էր տեղական գաւառական վարչութեան։ Նոր-Բայազէտի տեղական ազգաբնակութեան ընդհանուր կուրիայում մտել են 853 ընտրողներ, իսկ ծառայական (ռուսական) կուրիայում՝ 27 հոգի։ Զը նայելով որ ժողովուրդը հրաւիրվում է անձնապէս ստորագրելու և իւրաքանչիւրը չը մացրած դէպքում՝ իր անունը մուտելու ընտրողական ցուցակում, բայց և այնպէս ոչ օր չէ հետաքրքրվում, քանի որ ժողովուրդը այնքան էլ մեծ ակնկալութիւն չէ նախատեսում այդ ընտրութիւններից։ Մի խօսքով՝ դրա վերաբերմամբ ոչ մի հետաքրքրութիւն չէ տիրում մեր գաւառական ժողովրդի մէջ։

Երբ տեղական ընակչութիւնը ամեն կողմից լքված, առօրեայ կեանքի դառնութիւններից հնչված իր քաղաքային սեփական ընտրութիւններին (քաղ. ուսագ., օգնական, վարչութեան անդամների և այլն) անտարբեր է և անտարբեր է վերաբերվում—ընտրութիւններ, որոնք անմիջապէս կապ